

The Baptist Tabernacle of Los Angeles

Mailing Address:
P. O. Box 15308
Los Angeles, CA 90015

Phone: (213) 744-9999

E-mail: rlhymersjr@sbcglobal.net

www.sermonsfortheworld.com

www.baptisttabernacle.com



Dr. Christopher L. Cagan
Pastor

Dr. R. L. Hymers, Jr.
Pastor Emeritus

Դեկտեմբեր, 2020

Սիրելի ընկերներ:

2020 թվում ինչ ահավոր և չար վիճակներից անցանք! Նախագահը մեղադրանքի ենթարկվեց! Զորոնավիրուսը հարվածեց! Կրակը մեր անտառների մեծ մասը վառեց! Մարդիկ Կոմունիստներին հետևեցին ու խենթացան, վառելով քաղաքները! Ես թեկուզ չեի կարողանում ոտքի վրա կանգնել ու քարոզել! “Ոմանք հավատքից կ’հեռանան, եւ մտիկ կ’տան դեւերի վարդապետությունների; Ստախոսների կեղծավորությամբ, որոնց խիղճմտանքը տաղուած է:” (Ա Տիմոթեոս 4:1, 2) Թեկուզ Պապը միասեռականների միությունը հաստատել է! Այնպես է թվում որ բոլոր աշխարհը պատրաստվում է պայթելու, Հիսուս ասաց,

“Եւ նշաններ կ’լինեն արեգակումը և լուսնումը և աստղերումը, և երկրի վրա հեթանոսները խռովությամբ կ’տագնապին, ծովը կ’գոչե և կ’ծփան ալիքները: Որովհետեւ մարդկանց սրտերը կ’նուաղին վախից և այն բաների սպասելուց, որ բոլոր աշխարհի վրա պիտի գան. որովհետեւ երկնքի գորությունները կ’շարժուին: Եւ այն ժամանակ կ’տեսնեն մարդի Որդին ամպերի վերա եկած գորությամբ և մեծ փառքով: Եւ երբոր այս բաները կ’սկսեն լինիլ, վեր նայեցեք և բարձրացրեք ձեր գլուխները, որ ձեր փրկությունը մոտ է:” (Լուկաս 21:25-28)

“Եւ կ’մատնուիք ծնողներից և եղբայրներից և ազգականներից և բարեկամներից էլ, և ձեզանից կ’սպանեն:” (Լուկաս 21:16)

Ինչպես՝ ենք կարող այս համարները կարդալ ու չ’տեսնել որ ապրում ենք Սուրբ Գրքի մարգարեացված վերջին օրերում:

“Բայց Ծննդյան տոնի օրերում ենք,” կ’ասես! Դեկտեմբեր 1941 թվին Չրչիլը այցելության եր եկել Անգլիայից, որովհետեւ Ճապոնացիները Փրլի Հարբըրը ռմբակոծել էին ու Հիթլերը Լոնդոնն եր ռմբակոծում: Չրչիլը Սպիտակ Տնում հանդիպեց Նախագահ Փրանքլին Դ. Ռոզվելթին: Երբ նախագահը տոնածառի լույսերը վառեց, Չրչիլը ասաց, “Թույլ տվեք երեխաները խաղան ու հաճելի գիշեր ունենան:”

Բայց դու և ես այլեւս “երեխաներ” չենք! Այժմ ժամն է հասկանալու որ մեր միակ հույսը, այն մանուկն է որ ծնվեց Բեթլեհեմում – և մենք ոչ մի իրական հույս չունենք բացի Քրիստոսի Երկրորդ գալուսը իբրեւ Թագավորների Թագավոր և Տերերի Տեր!

Երկար ժամանակ առաջ, 1950 թվականներում, Աստված ինձ մի համար տվեց որ խորապես օգնեց ինձ իբրեւ հովիվ այն ուղտաղբուժության ժամանակներում:

“Ես ամեն բան կարող եմ անել ինձ գորացնող Քրիստոսով:” (Փիլիպեցիս 4:13)

Փետրվար 2-ին տոնեցինք Չինական Նոր Տարին առավոտյան ու իրիկվան ժողովների ընթացքում:

**ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ ԲԱՌ-ԱՌ-ԲԱՌ ԿԱՐԴԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՎՈՐ ՔԱՐՈՉՆԵՐ և ԴԱՍԵՐ
ԲԱՌԱՍՈՒՆ ՀԻՆԳ ԼԵՉՈՒՆԵՐՈՎ ԹԱՐԳՄԱՆՎԱԾ, WWW.SERMONSFORTHEWORLD.COM**

Մարտ 1-ում մեր վերջին Կիրակին ունեցանք հին շենքում, Հոփ փողոցում: 2020 տարվա մնացած ամիսներում մեր ժողովները ունեցանք երկու տներում, կորոնավիրուսի պատճառով: Ամեն շաբաթ մի դաս նկարահանեցի վիդիոյի վրա, որոնք այդ երկու տներում ցույց տրվեց: Վիդեոյի դասավանդումներից հետո ընթրիք ունեցանք:

Իմ 79-րդ տարեդարձը Չատիկ Կիրակի, Ապրիլ 12-ի հետ գուգադիպվել էր: Մենք նաև Տիկ. Հայմերգի ծննունդն էր Ապրիլ 16-ին տոնեցինք: Կարող եմ ասել, “Շատ աղջիկներ են առաքինություն գործել, բայց դու նորանց ամենիցն էլ գերազանց եղար:” (Առակաց 31:29)

Մեպտեմբեր 27-ին եկեղեցին տոնեց մեր 38-րդ ամուսնության տարեդարձը: Այս անցած տարվա ընթացքում իմ առողջությունը շատ լավ չի եղել, այն աստիճան որ անկարելի էր ինձ համար կանգնել ու քարոզել: Դա քաղցկեղի բժշկվելու ճառագայթների հետեվանքով է եղել որ ներվերից մեկը վնասվել է:

Սակայն, նույն տարում, Աստված մեր գործը օրհնեց! Մենք երեք լեզուներ ավելացրեցինք համար-առ-համար Աստվածաշունչից ուսումնասիրություններ ու քարոզներ մեր համացանում այս հասցեով, www.sermonsfortheworld.com: Մենք ավելացրել են Խոնգո Չին, Մեյլենմարի (Բուրմա) տեղական լեզուն իբրեւ մեր 43-րդ լեզուն: Նաև ավելացրել ենք Մալանեյալամ, Հնդկաստանի մի ուրիշ լեզուներից, իբրեւ 44-րդ լեզուն: Ապա ավելացրեցինք Սինհալա, Սրի Լանքայի լեզուն իբրեւ մեր 45-րդ լեզուն:

Ամեն շաբաթ հիանալի ելեկտրոնիկ նամակներ եմ ստանում քարոզիչներից աշխարհի տարբեր երկրներից բացատրելով թե ինչքան է այդ դասերը և քարոզները օգնել նրանց:

Հուլիս 7-ին մեր եկեղեցու հին շենքը Հոփ փողոցում ծախվեց, մեծապես շնորհակալ ենք իմ որդու Բորերթի աշխատանքից:

Հոկտեմբեր 13-ին եկեղեցին տոնեց Իւջին Գրեյսի կյանքը նրա հուղարկավորությունում որը տեղի ունեցավ Բիվերսայդի Ազգային գերեզմանատնում: Դկ. Քեյզընը Պրն. Գրեյսին Հիսուսին առաջնորդեց մի քանի ժամ նախքան նրա մահը, 91 տարեկան հասակում: Պրն. Գրեյսը Թամ Ժիայի խորթ հայրն էր, մեր եկեղեցու լավ երիտասարդներից մեկը: Մի քանի շաբաթ հետո, Դկ. Քեյզընը Ավետարանի Բարի Լուրը ներկայացրեց Պրն. Գրեյսի կնոջը, և հիմա նա հավիտենական կյանք ունի: Հույսով նա կ'իմի առաջին մկրտվող անձը մեր նոր եկեղեցում, Սան Գաբրիելում: Տիկ. Հայմերգը ինձ Բիվերսայդ տարավ մասնակցելու Պրն. Գրեյսի հուղարկավորությանը: Ապա այնտեղից գնացինք Օքսնարդ քաղաքը, ուր մի քանի օրեր ծովի ափում հանգստացանք:

Նոյեմբեր 22 -ին (Կիրակի) Գոհաբանական տոնակատարություն ենք ունենալու Պրն. Քեյզընի բնակարանում,, Ալիամբրայում:

Ես դեռ աշխատում եմ, դասընթացներ ու քարոզներ եմ գրում, ու Դկ. Քեյզնին օգնում եմ: Մի քանի շաբաթից 81 տարեկան եմ դառնալու: Ես չեի կարողանալ աշխատել եթե իմ թանկագին կինը, Իլիանան – և Հիսուսը որից կարողություն եմ ստանում, չ'օգնեին առաջ ընթանալ:

“Ես ամեն բան կարող եմ անել ինձ գորացնող Քրիստոսով:” (Փիլիպեցիս 4:13)

Սա Հիսուսի խոստումն է! Այս նամակը փակելու եմ իմ գործըներ, Դկ. Քրիստոֆըր Քեյզնի, վկայությունից մեջբերում անելով:

Տարիներ առաջ խաղաղություն չունեի: Ապրում էի ինձ համար: Չէի մտածում Աստծո մասին կամ թե ինչ էր պատահելու ինձ մահից հետո: Ինքս ինձ էի վստահում: Փախչում ու թագնվում էի Աստծուց: Զոլեջում գերազանց աշակերտ էի ու շատ գումար էի վաստակում, բայց միայնակ ու տխուր էի:

Հետո հանդիպեցի Քրիստոնյաների որոնք բարի էին ինձ հանդեպ: Սկսեցի եկեղեցի գնալ: Բայց դեռ ուզում էի իմ կերպով ապրել: Մի գիշեր գնացի ժողովի մի դպրոցում: Մի երիտասարդ իմ կյանքում լսած ամենա լավ լուրը ինձ հետ բաժնեկցեց – որ Աստված ինձ սիրում է ու ուզում է ինձ հավիտենական կյանք տալ: Նա ինձ ասաց ինչպես եմ կարող հավիտենական կյանք ստանալ: Այդ գիշեր վստահեցի Հիսուսին և Նա իմ մեղքերը ներեց ու հավիտենական կյանք շնորհեց ինձ:

Այժմ խաղաղություն ունեն: Հավիտենական կյանք ունեն: Հիսուս ինձ ներսից բժշկեց: Նա ինձ հույս և ուրախություն տվեց: Այլևս միայնակ չեմ: Գիտեմ եթե այդ գիշեր մեռնեմ, Երկինք եմ գնալու Աստծուն մինալու, որովհետև Հիսուս ինձ հավիտենական կյանք է տվել!

Շատ ուրախ եմ որ Հիսուսի համար եմ գործում! Դա առանց Նրա գործության ու շնորհքի չէի կարող անել, առանց Դ.կ. Քեյզնրի ու Իլիանայի, և մեր որդի Ջան Վեսլիի օգնությանը չէի հաջողվելու:

Թող Հիսուս քեզ և քո ընտանիքին օրհնի! Նաև կ'իսնդրեմ աղոթեք Քենթ Ֆիլիպթի և ինձ համար, մենք խմբագրում ենք Քենթի գիրքը "Ազատագրում Հիսուսի Միջոցով"! Իսնդրեմ աղոթեք մեզ համար երբ սկսելու ենք մեր նոր Չինական Մկրտչական եկեղեցին Սան Գաբրիելում:



Դր. Հայմերզը և իր կինը Իլիանան, իր որդին Բաբերթը և նրա կինը Ջինը, ու նրանց երկու մանուկ աղջիկները, Հանան և Սարան: Աղոթում եմ որ նրանք մի ուրիշ զավակ էլ ունենան:

Թող Քրիստոս փառավորվի հավիտյան!

Պատվելի Բ.Լ. Հայմերզ,
D.Min., D.Rel., Th.D., Litt.D.
Փիլիպեցիս 4:13

“Մարդ որ մոլորվում է խոհեմության ճանապարհից, ուրուականների ժողովքի մեջ կիջնե:” (Առակաց 21:16)

**ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ ԲԱՌ-ԱՌ-ԲԱՌ ԿԱՐԴԱԼ ՀԱՐՅՈՒՐԱՎՈՐ ՔԱՐՈՉՆԵՐ և ԴԱՍԵՐ
ՔԱՌԱՍՈՒՆ ՀԻՆԳ ԼԵՉՈՒՆԵՐՈՎ ԹԱՐԳՄԱՆՎԱԾ WWW.SERMONSFORTHEWORLD.COM**